

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

**ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԾՐԱԳԻՐ**

Դասընթացի անվանումը՝ **«Արվեստի պատմության ներածություն - 1»**  
(4 կրեդիտ)

Ժամաքանակը՝ 64 (40 ժ. դասախոսություն, 24 ժ. սեմինար)

Կազմող՝ Լուսինե Սարգսյան

## Բացատրական մաս

«Արվեստի պատմության ներածություն-1» դասընթացի **նպատակն է** արվեստի հիմունքների վերաբերյալ գիտելիքի հաղորդումը:

Դասընթացի **խնդիրներն են՝**

- ուսանողներին ծանոթացնել արվեստի բնույթին,
- սովորեցնել արվեստագիտական վերլուծության հերթափուլերը և մեթոդները,
- ծանոթանացնել արվեստի պատմության պարբերացմանը,
- տարբերակել գրաֆիկայի և գեղանկարչության ձևերը, տեսակները և ժանրերը, դրանց համապատասխանող տեխնիկաները և նյութերը:
- ճանաչել գրաֆիկայի և գեղանկարչության գեղարվեստական առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները:

Դասընթացի **հիմնարար գաղափարները** բխում են արվեստի հիմունքների, արվեստի պատմության պարբերացման, արտաքին ֆորմայի վերլուծության վերաբերյալ Հ. Վյոլֆիլինի և Բ. Վիպպերի գիտական հայեցակարգերից:

Դասընթացի հիմնական **հասկացություններն են՝** «արվեստի պատմություն», «գեղարվեստ», «կերպարվեստ», «պլաստիկական արվեստներ», «տարածական արվեստներ», «արվեստի պատմություն», «արվեստի տեսություն», «արվեստի քննադատություն», «գրաֆիկա», «գեղանկարչություն», «ձև», «ոճ», «ուղղություն», «գեղարվեստական դպրոց», «անհատական ձեռագիր», «արտաքին ֆորմայի վերլուծություն»:

Դասընթացը հիմք է հանդիսանում ուսումնառության հաջորդ տարիների ընթացում հայ և համաշխարհային կերպարվեստի պատմության առանձին փուլերի ուսումնասիրության համար:

Դասընթացի ավարտից հետո ուսանողներն արվեստի գրաֆիկական և գեղանկարչական որևէ գործ դիտելիս **կկարողանան՝**

- ճանաչել ձևը, տեսակը և ժանրը,
- տարբերակել պատրաստման տեխնիկան և նյութերը,
- բնութագրել ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները:

Դասընթացի թեմատիկ բովանդակությունն ըստ ժամաքանակի

	ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ	
		Դասալիտություն	Մեկինայր
1.	Արվեստի բնույթը, դասակարգումը ըստ տեսակների: Պլաստիկական արվեստների հիմնական տարատեսակները:	2 ժամ	-
2.	Արվեստաբանության ձևավորումը, հիմնական բնութագիրը, նրա առարկան և բաղկացուցիչ մասերը:	2 ժամ	-
3.	Ոճը արվեստում և նրա արտահայտությունները:	2 ժամ	-
4.	Արվեստի պատմության պարբերացումը:	2 ժամ	2 ժամ
5.	Գրաֆիկան, նրա բնորոշումը, հիմնական երկու ձևերը և տարատեսակները: Գրաֆիկայի առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները:	4 ժամ	-
6.	Գծանկարը (գծանկարչությունը), նրա երկու ձևերը և տարատեսակները: Գծանկարի (գծանկարչության) նյութերն ու գործիքները:	4 ժամ	2 ժամ
7.	Տպագրական գրաֆիկան, նրա տեխնիկական էլեմենտները և երեք հիմնական տեսակները:	2 ժամ	-
8.	Քսիլոգրաֆիան (ուռուցիկ փորագրությունը) և նրա առանձնահատկությունները, զարգացումը:	2 ժամ	2 ժամ
9.	Խորացված մետաղյա փորագրությունը. Հիմնական տեսակները և գեղարվեստական առանձնահատկությունները:	4 ժամ	2 ժամ
10.	Հարթ փորագրությունը (լիտոգրաֆիան և ալգրաֆիան) և նրա գեղարվեստական առանձնահատկությունները:	2 ժամ	2 ժամ
11.	Ծաղրանկարը (ծաղրանկարչությունը) և պլակատը կերպարվեստում: Կիրառական գրաֆիկայի տարատեսակները:	2 ժամ	2 ժամ
12.	Գրքային գրաֆիկան և նրա առանձնահատկությունները:	2 ժամ	2 ժամ

13.	Գեղանկարչությունը և նրա առանձնահատկությունները: Գեղանկարչության հիմնական տեսակները:	2 ժամ	2 ժամ
14.	Գեղանկարչության հիմնական տեխնիկաները:	4 ժամ	4 ժամ
15.	Գեղանկարչության հիմնական արտահայտչամիջոցները:	2 ժամ	2 ժամ
16.	Գեղանկարչության հիմնական ժանրերը: Պլենեռային նկարչություն:	2 ժամ	2 ժամ
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>40</b>	<b>24</b>

### Բովանդակությունը

#### **Թեմա 1. Արվեստի բնույթը, դասակարգումը ըստ տեսակների: 2 ժամ դասախոսություն:**

Պատմության ընթացքը, մշակույթը, արվեստը, մտահղացումը և նրա ստեղծագործական մարմնավորումը: Արվեստի դերը հոգևոր կյանքում, արվեստը և հասարակությունը: Արվեստը որպես հասարակական գիտակցության հատուկ ձև. աշխարհընկալումը և արվեստը: Ձևի և բովանդակության միասնությունը գեղարվեստական կերպարում: Արվեստը որպես իրականության արտացոլում, որպես գաղափարների, զգացմունքների և արտահայտման միջոց: Օբյեկտիվը և սուբյեկտիվը գեղարվեստական ստեղծագործության մեջ: Արվեստ-բնություն հարաբերությունը: Արվեստների դասակարգումը ըստ ընկալման (տեսողություն և լսողություն) միջոցների: Սինթետիկ, ժամանակային և տարածական արվեստները: «Գեղարվեստ», «կերպարվեստ», «պլաստիկական արվեստներ», «տարածական արվեստներ» տերմինների նշանակությունը: Պլաստիկական կամ տարածական արվեստների առանձնահատկությունը և տարբերությունը ժամանակային արվեստներից: Պլաստիկական արվեստների հիմնական տարատեսակները: Պատկերային և ոչ պատկերային ձևերը պլաստիկական արվեստներում:

#### **Թեմա 2. Արվեստաբանության ձևավորումը, հիմնական բնութագիրը, նրա առարկան և բաղկացուցիչ մասերը: 2 ժամ դասախոսություն:**

Արվեստաբանության կայացման գործընթացը: Արվեստի պատմության, արվեստի տեսության և արվեստի քննադատության ձևավորումը և միավորումը մեկ միասնական գիտության՝ արվեստաբանության մեջ: Արվեստագիտական վերլուծությունը, նրա հերթափուլերը և մեթոդները: Ձևը, ֆորման կերպարվեստում և «ֆորմալ» վերլուծությունը. Ձևակազմության վյուֆիլիյան հինգը գույգ հիմնական սկզբունքները: Հարակից գիտությունների դերը արվեստաբանական վերլուծության մեջ:

**Թեմա 3. Ոճը արվեստում և նրա արտահայտությունները: 2 ժամ դասախոսություն:** Ոճը որպես գեղարվեստական սկզբունքների, կերպարի ստեղծման արտահայտչամիջոցների, ստեղծագործական հնարանքների միասնություն: Ոճի զարգացման երեք փուլերի ցիկլի կրկնությունը. վաղ, հասուն և ուշ շրջանների ոճերի հաջորդականությունը: Տարբեր ոճերի զուգահեռ գոյության հնարավորությունը: «Ուղղություն», «գեղարվեստական դպրոց» և «անհատական ձեռագիր» հասկացությունների բովանդակությունը:

**Թեմա 4. Արվեստի պատմության պարբերացումը: 2 ժամ դասախոսություն:** Երբ, որտեղ և ինչու է «ստեղծվել» արվեստը: Հնագույն քաղաքակրթությունների ( Չինաստան, Հնդկաստան, Եգիպտոս, Շումեր, Աքքադ, Ասորեստան, Հայկական լեռնաշխարհ, Ուրարտու և այլն) արվեստի առանձնահատկությունների (ճանաչողական և մոգական դերի), ժայռապատկերների, մարդու կողմից «երկրորդ բնության» արարումը: Հերոսի կերպարը հնագույն պատկերացումներում: Հունական անտիկ արվեստի առանձնահատկությունները: Դեմոկրատիան և անտրոպոմորֆիզմն իբրև հունական մշակույթի և կերպարվեստի ձևավորման կարևորագույն տարրեր: Հին Հռոմի արվեստը, զուգահեռները հունական և արևելյան արվեստների հետ: Միջնադարյան (Բյուզանդիա, Արևմտյան Եվրոպա, Հայաստան) աշխարհընկալումը. կրոնի դերն արվեստում: Իտալական և հյուսիսային Վերածնունդի շրջանը: Գիտական հեղաշրջումները և դրանց ազդեցությունը արվեստում: Մարդու և անհատի մասին պատկերացումներն ըստ Պիկա դելլա Միրանդոլայի և Միշել Մոնտեի: Եվրոպական կերպարվեստը 17-18-րդ դարերում (բարոկկո, նեոկլասիցիզմ): Ֆրանսիական Լուսավորականությունը, բուրժուական հեղափոխությունը և արվեստը: 19-րդ դարի արվեստը. ռոմանտիզմ, կլասիցիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ, իմպրեսիոնիզմ, պոստիմպրեսիոնիզմ: Իմպրեսիոնիզմի առանցքային դերն արվեստի պատմության մեջ. գեղարվեստական մեթոդը և աշխարհայացքը: Դենի Դիդրոյի քննադատական միտքը «Սալոններ» աշխատության մեջ: Նորագույն, ոչ ավանդական արտահայտչամիջոցների որոնումը պոստիմպրեսիոնիստների (Վ. վան Գոգ, Պ. Գոգեն, Պ. Սեզան) արվեստում: Մոդեռնի գեղարվեստական առանձնահատկությունները և գեղագիտական պատկերացումները: Շուկա-նկարիչ հարաբերությունները 20-րդ դարում: 20-րդ դարի արվեստի ուղղությունները (կուբիզմ, ֆովիզմ, էքսպրեսիոնիզմ, ֆուտուրիզմ, աբստրակցիոնիզմ, սյուրռեալիզմ և այլն): Պոստմոդեռնիզմի արվեստը:

**Թեմա 5. Գրաֆիկան, նրա բնորոշումը, հիմնական երկու ձևերը և տարատեսակները: Գրաֆիկայի առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները: 4 ժամ դասախոսություն:** Գրաֆիկան իբրև կերպարվեստի ամենատարածված և հին ձևը:

Գրաֆիկայի երկու ձևերը ընստ ստեղծման եղանակի՝ գծանկարչություն և տպագիր գրաֆիկա: Գրաֆիկայի տեսակներն ըստ գործառույթի՝ հաստոցային գրաֆիկա, գրքային գրաֆիկա (գրքերի, ամսագրերի, թերթերի պատկերագարդումները), կիրառական գրաֆիկան իր տարատեսակներով (նամականիշեր, պիտակներ և այլն) և պլակատն ու ծաղրանկարն իբրև գրաֆիկայի երիտասարդ ճյուղեր: Գրաֆիկայի առանձնահատկությունները կերպարվեստի մյուս տեսակներից: Գրաֆիկայի արտահայտչամիջոցները. գույնի կիրառումը գրաֆիկայում (18-19-րդ դդ. ճապոնական և ֆրանսիական ռոկոկոյի գրաֆիկան), սևի և սպիտակի հակադրությունը:

**Թեմա 6. Գծանկարը (գծանկարչությունը), նրա երկու ձևերը և տարատեսակները: Գծանկարի (գծանկարչության) նյութերն ու գործիքները: 4 ժամ:** Գիծն իբրև կերպարվեստի հիմք. պլաստիկական ֆորմայի ստեղծող, դեկորատիվ ռիթմի հաղորդիչ և տրամադրության արտահայտիչ: Գիծը, բիծը և մանրագիծը: Գծանկարի ինքնուրույն և օժանդակ ձևերը: Ինքնուրույն գծանկարն իբրև ավարտուն ստեղծագործություն: Օժանդակ գծանկարն՝ Էսքիզ (նախանկար), ճեպանկար և էտյուդ, իբրև նախապատրաստական փուլ կերպարվեստի այլ ստեղծագործությունների համար: Փայտե տախտակը, պապիրուսը, մագաղաթը և թուղթը իբրև գծանկարի հիմնական նյութեր: Գծանկարի գործիքների դասակարգման երկու հիմնական սկզբունքները՝ ըստ Գ. Լեպորինիի և Ա. Միդորովի: Մետաղյա գրիչը (գրիֆելը), արճճե և արծաթե գրիֆելների կիրառությունը, գրաֆիտե մատիտը և Կոնտեի մատիտը, ծայրը (եղեգից, փետուրից և մետաղյա) որպես եվրոպական գծանկարչության հիմնական գործիք: Տուշը, սեպիան և բիստրը: Ծայրի և վրձնի համադրությունը: Տոնային գծանկարչությունը. իտալական մատիտ, ածուխ և սանգինա: Պարմիջանինոն (Ֆրանչեսկո Մագգոլա) որպես տոնային գծանկարի հիմնադիրներից մեկը (16-րդ դար):

**Թեմա 7. Տպագրական գրաֆիկան, նրա տեխնիկական էլեմենտները և երեք հիմնական տեսակները: 2 ժամ դասախոսություն:** Տպագրական գործի հայտնագործումը: Տպագրական գրաֆիկան իբրև մասսաներին ամենից հասանելի կերպարվեստի տեսակ, նրա կապը գաղափարական պրոպագանդայի, լրատվության, գովազդի հետ: Տեխնիկական չորս հիմնական էլեմենտները. տախտակ, գործիքներ, տպագրական ներկի և տպագրում: Տպագրական գրաֆիկայի երեք հիմնական տեսակները՝ կախված տպագրական տախտակի նյութից և նրա հետ աշխատելու եղանակից. ուռուցիկ փորագրություն, խորացված փորագրություն և հարթ փորագրություն:

**Թեմա 8. Ուռուցիկ փորագրությունը և նրա առանձնահատկությունները, զարգացումը: 2 ժամ դասախոսություն:** Փորագրությունը փայտի (քսիլոգրաֆիան) և լինոլեումի

(լինոգրավուրա) վրա՝ որպես ուռուցիկ փորագրության հիմնական տեսակներ: Ուռուցիկ փորագրության տեխնիկական և ոճական առանձնահատկությունները խորացված և հարթ փորագրություններից: Քսիլոգրաֆիայի վաղագույն օրինակները Չինաստանում և Եվրոպայում (Ա. Դյուրերի, Հ. Հոլբայնի Կրտսերի գործերում): Գունավոր քսիլոգրաֆիան եվրոպացի վարպետների՝ Լ. Կրանսխի, Հ. Սեգերսի, Ու. Մորիսի, Պ. Գոգենի, Է. Մունկի և այլոց արվեստում: Ճապոնական գունավոր քսիլոգրաֆիաները՝ Կ. Ուտամարոյի, Տ. Սարակուի, Կ. Հոկուսայի աշխատանքներում:

**Թեմա 9. Մետաղյա խորացված փորագրությունը. Հիմնական տեսակները և գեղարվեստական առանձնահատկությունները: 4 ժամ դասախոսություն:** Մետաղյա տախտակի (հիմնականում պղինձ, նաև ցինկ և ալյումին) փորագրության առանձնահատկությունները: Խորացված փորագրության տեսակները՝ ըստ տախտակի վրա փորագրության եղանակի. մեխանիկական, քիմիական և խառը եղանակներով ստացված փորագրություններ: Մեխանիկական եղանակով ստացված փորագրության երեք տեսակները՝ հատիչային դասական մետաղյա փորագրությունը, մեցցո-տինտոն (կամ «սև մաներան») և «չոր ասեղը», դրանց տեխնիկական և ոճական առանձնահատկությունները: Հատիչային փորագրության առաջացումը (15-րդ դ. կեսեր) և զարգացման ընթացքը: Վարպետներ Մ. Շոնհաուերի, Ա. Մանտենյայի, Ջ. Կամպանյոլայի, Ա. Դյուրերի և Լ. Լեյդենացու ստեղծագործությունները: Մեցցո տինտոյի ստեղծումը գերմանացի արվեստի սիրահար Լ. ֆոն Ջիգենի կողմից (17-րդ դ.): Չոր ասեղի համադրությունը խորացված փորագրության այլ տեխնիկաների, մասնավորապես օֆորտի հետ: Քիմիական եղանակով ստացված փորագրության երեք տեսակները՝ օֆորտը, «փափուկ լաքը» և ակվատինտան, դրանց տեխնիկական և ոճական առանձնահատկությունները: Օֆորտի վաղագույն օրինակները 16-րդ դ. սկզբին՝ գերմանացի վարպետներ Դ. Հոպֆերի և Ա. Դյուրերի, շվեյցարացի փորագրիչ Ու. Գրաֆի արվեստում: Օֆորտի զարգացումը 17-րդ դարում օֆորտիստներ Ժակ Կալլոյի (Ֆրանսիա) և Ռ. Վան Ռեյնի (Հոլանդիա) արվեստում: Օֆորտի վարպետները 18-րդ դարում՝ իտալացիներ Ջ. Բ. Տյեպոլո և Ջ. Բ. Պիրանեզի և իսպանացի Ֆ. Գոյա: Անգլիայի դերը օֆորտի զարգացման գործում 19-րդ դարում (Ս. Հեդեն) և դրա շարունակությունը 20-րդ դարում (Ֆ. Բրենզվին): Ակվատինտայի հայտնագործումը ֆրանսիացի նկարիչ Ժ. Բ. Լեպրենսի կողմից 18-րդ դարում: «Փափուկ լաքի» տարածումը 19-րդ դարում: Մետաղյա փորագրության խառը տեսակները՝ մատիտե մաներան և պունկտիրը, դրանց տեխնիկական և ոճական առանձնահատկությունները: Ա. Կաուֆմանը և Ֆ. Բարտոլոցցին Անգլիայում (18-րդ դար):

**Թեմա 10. Հարթ փորագրությունը (լիտոգրաֆիան, ալգրաֆիան և ցինկոգրաֆիան) և նրա գեղարվեստական առանձնահատկությունները: 2 ժամ դասախոսություն:** Հարթ փորագրության առաջացումը 1796թ. Ա. Ջենեֆեյդերի կողմից Մյունխենում: Հարթ փորագրությունը քարի վրա (լիթոգրաֆիա), այլումինի վրա (ալգրաֆիա) և ցինկի վրա (ցինկոգրաֆիա): Տեխնիկական և ոճական առանձնահատկությունները: Հարթ փորագրության տարածումը 19-րդ դարում՝ Թ. Ժերիկո, Է. Դելակրուա և Օ. Դոմիե (Ֆրանսիա):

**Թեմա 11. Ծաղրանկարը (ծաղրանկարչությունը) և պլակատը կերպարվեստում: Կիրառական գրաֆիկայի տարատեսակները: 2 ժամ դասախոսություն:** Ծաղրանկարը և պլակատը որպես գրաֆիկայի երիտասարդ ճյուղեր: Փոխաբերությունը, այլաբանությունը և գրոտեսկը ծաղրանկարում: Ծաղրանկարի խնդիրները և նպատակները: Քննադատական, սուր տենդենցը ծաղրանկարում: Գիծը որպես ծաղրանկարի հիմնական արտահայտչամիջոց: Հակիրճ և դիպուկ գրության նշանակությունը ծաղրանկարում: Ծաղրանկարի զարգացումը սոցիալական ցնցումների, հեղափոխությունների ժամանակ: Անգլիայում Ու. Հոգարտի (18-րդ դար), Ֆրանսիայում Օ. Դոմիեյի և Ա. Տուլուզ-Լոտրեկի (19-րդ դար) արվեստում: Պլակատը և նրան ներկայացվող պահանջները: Պլակատի կապը գովազդի, քարոզչության հետ: Պլակատի գեղարվեստական լուծումները և առանձնահատկությունները: «Ալբա» կոչվող հայտարարություններն իբրև պլակատի «նախատիպեր»: Պլակատի առաջացումը 19-րդ դարում: Պլակատի զարգացումը I և II համաշխարհային պատերազմների ժամանակ: Կիրառական գրաֆիկայի ընդգրկուն ոլորտը, տեսակները: Փոստային նամականիշեր, պիտակներ, էքսլիբրիսներ (մատենանիշ, գրքանիշ): Գրաֆիկական դիզայնի առանձնահատկությունները:

**Թեմա 12. Գրքային գրաֆիկան և նրա առանձնահատկությունները: 2 ժամ դասախոսություն:** Գրքային պատկերազարդումը տառի և նկարի միջոցով. տառն իբրև զարդանախշ կամ թաքուն կերպարային լեզվի արտահայտիչ, նկարն իբրև բովանդակության պատկերային մեկնիչ: Գրքային նկարազարդման առանձնահատկությունները՝ կախված գրքի թե՛ ձևից, թե՛ գաղափարական կառուցվածքից: Նկարչի և գրողի համագործակցության կարևորությունը: Գրքի գեղարվեստական հարդարանքի ձևավորումը և զարգացման ընթացքը: Ս. Բոտիչելլիի գրքային նկարազարդումները Դանթեի «Աստվածային կատակերգության» համար, Ա. Դյուրերի «Ապոկալիպսիսը»:

**Թեմա 13. Գեղանկարչությունը և նրա առանձնահատկությունները: Գեղանկարչության հիմնական տեսակները: Ֆորմատը և շրջանակը: 2 ժամ դասախոսություն:**

Գեղանկարչության առանձնահատկությունները կերպարվեստի այլ տեսակներից, տարածության և մարմնի միաձուլումը հարթության վրա: Իրականության պատրանքային պատկերումը գեղանկարչության միջոցով: Դեկորատիվությունը գեղանկարչության մեջ: Գեղանկարչության հիմնական տեսակները. մոնումենտալ դեկորատիվ գեղանկարչություն (խճանկար, երփնապակի /վիթրաժ/, որմնանկարչություն), հաստոցային գեղանկարչություն, բեմանկարչություն /սցենոգրաֆիա/, սրբանկարչությունը որպես տեսակ և ժանր, մանրանկարչություն իբրև գրքարվեստի մաս և գեղանկարչության առանձին տեսակ: Նկարի ֆորմատի (չափսի) և շրջանակի դերը ստեղծագործության ճշգրիտ ընկալման և մատուցման գործում:

**Թեմա 14. Գեղանկարչության հիմնական տեխնիկաները: 4 ժամ դասախոսություն:** Ներկը, նրա բաղադրությունը և բնորոշ հատկությունները: Յուղաներկ, կատարման երկու եղանակները՝ դասական շերտանկարչություն և «ալլա պրիմա» նկարչություն: Պաստելն (կավճամատիտ) իբրև գեղանկարչության, մասամբ նաև գրաֆիկայի տեխնիկա: Ակվարել (ջրաներկ) ու գուաշ: Ֆրեսկո և ալ-սեկկո: Տեմպերային նկարչությունն իբրև սրբապատկերի տեխնիկա: Խճանկարի և երփնապակու /վիթրաժ/ տեխնիկաները: Էնկասուստիկայի (գեղանկարչություն մոմաներկերով) տեխնիկա:

**Թեմա 15. Գեղանկարչության հիմնական արտահայտչամիջոցները: 2 ժամ դասախոսություն:** Հորինվածքն իբրև պատկերը կազմակերպող միջոց: Կայուն և դինամիկ հորինվածքներ: Հեռանկարը գեղանկարչության մեջ իբրև հորինվածքի տարր: Բաց և փակ հորինվածքներ: Գեղանկարչությունն իբրև գույնի արվեստ: Լոկալ և անալիտիկ գույներ: Տաք և սառը տոներ: Վալյոր և կոնտրաստ: Կոլորիտն իբրև գունային տոների համակարգ: Գիծը գեղանկարչության մեջ իբրև ծավալի ստեղծող: Պայմանական կամ վերացական գծանկար: Լուսաստվերն իբրև ծավալի, խորության հաղորդման միջոց. ծավալի ընկալումը լույսի միջոցով իրականության մեջ և դրա գեղանկարչական պատկերումը: Գեղանկարչական ֆորմայի հիմնական էլեմենտները. գույնի, գծի և լուսաստվերի զարգացումը գեղանկարչության մեջ: Ռիթմը գեղանկարչության մեջ. գծային և գունային ռիթմեր: Վրձնահարվածն իբրև նկարչի ձեռագրի արտահայտիչ. անհարթ և հարթ քվածքներ:

**Թեմա 16. Գեղանկարչության հիմնական ժանրերը: Պլենեռային նկարչություն: 2 ժամ դասախոսություն:** Գեղանկարչության ժանրային և ենթաժանրային դասակարգման սկզբունքը: Պատմական ժանր: Բնանկարի ժանր: Կենցաղային ժանր: Նատյուրմորտ: Անիմալիստական ժանր: Դիմանկարի ժանր: Նյու (մերկ մարմնի պատկերում): Թեմատիկ պատկեր: Ժանրերի ձևավորումը և զարգացման ընթացքը: Պլենեռային

(բացօթյա) նկարչության առանձնահատկությունները: Յուրաքանչյուր ժանրի ձևավորումը և զարգացման ընթացքը:

### **Մեթոդական ցուցումներ**

**Դասընթացի կազմակերպման ձևերն են՝** դասախոսությունները և սեմինար պարապմունքները: Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը **դասախոսությունն է**, որի ընթացքում ուսանողներին մատուցվում է տվյալ դասաժամին վերաբերող տեսական նյութը՝ զուգահեռաբար ցուցադրելով սլայդներ: Առանձին թեմաներ (գրաֆիկայի և գեղանկարչության տեխնիկաները) ուղեկցվում են տեսանյութերի դիտումով: **Սեմինարներն** իրականացվում են ուսանողների բանավոր և գրավոր հարցման միջոցով: Բանավոր հարցումը թույլ է տալիս ակտիվ քննարկում կազմակերպել դասընթացի ընթացքում յուրացրած տեսական հարցերի շուրջ: Գրավոր հարցման ժամանակ, տեսական գիտելիքը հիմք ընդունելով, գրաֆիկայի և գեղանկարչության մեկական ստեղծագործության արվեստաբանական վերլուծություն կատարել: Առանձին սեմինար պարապմունքներ իրականացվում են լսարանից դուրս: Մեկ դասընթաց անց է կացվում Ազգային պատկերասրահում, որտեղ ուսանողների և դասախոսի ակտիվ երկխոսության, քննարկման միջոցով ամրապնդվում են լսարանային դասերի ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքները: Մեկական դասեր անց են կացվում Գեղարվեստի ակադեմիայի գրաֆիկայի և գեղանկարչության լաբորատորիաներում: Այստեղ ուսանողների ականատես են լինում գրաֆիկական և գեղանկարչական ստեղծագործությունների ստեղծման պրոցեսին: Այս ընթացքում ուսանողներն իրավունք ունեն հղել իրենց հուզող հարցերը և ստանալ դրանց պատասխանները: Այսօրինակ գործնական դասընթացների նպատակն է դասախոսությունների ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքի հիման վրա պրակտիկ գիտելիքի հաղորդումը:

**Ուսանողի թղթապանակը** մեթոդական հնարք է, որն ընդգրկում է կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած աշխատանքը: Այն բաղկացած է՝

- սեմինարների գրավոր հարցման երկու պատասխաններից,
- արտալսարանային դասընթացների ընթացքում յուրացրած գիտելիքն առանձին-առանձին ներկայացնել գրավորի աշխատանքների տեսքով,
- ռեֆերատ աշխատանք, որոնց թեմաներն առաջադրվում են դասախոսի կողմից՝ ըստ դասախոսությունների ընթացքում յուրացրած թեմաների և ենթաթեմաների բովանդակության: Ուսանողներն ազատ են առաջադրվող թեմաներից որևէ մեկի ընտրության հարցում՝ դրանք չկրկնելու պայմանով:

**Գնահատման և ստուգման մեթոդներ.** կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշվում է երկու գրավոր ընթացիկ քննությունների և եզրափակիչ բանավոր հարցման միջոցով:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները՝**

- **առաջին և երկրորդ գրավոր ընթացիկ քննություններ** – յուրաքանչյուրը 4 միավոր, առավելագույնը՝ 8 միավոր: Յուրաքանչյուր քննության հարցատոմս բաղկացած է երկու տեսական հարցերից (յուրաքանչյուր հարցի արժեքը 1.5 միավոր, առավելագույնը՝ 3 միավոր) և մեկ գործնական հարցադրումից (հարցի արժեքը 1 միավոր), այն է՝ ստեղծագործության ճանաչողություն և նկարագրական վերլուծություն:
- **եզրափակիչ բանավոր քննություն** – հարցատոմսն ընդգրկում է երկու տեսական հարցեր (յուրաքանչյուր հարցի արժեքը 2.5 միավոր, առավելագույնը՝ 5 միավոր) և մեկ գործնական հարցադրում՝ տասը ստեղծագործությունների ճանաչողություն (հարցի արժեքը 2 միավոր): Բանավոր եզրափակիչ հարցման մեջ են ներառված նաև ուսանողական թղթապանակի գնահատումը՝ 3 միավոր, որից՝ ռեֆերատ աշխատանք – 1 միավոր, սեմինարի գրավոր հարցում և արտալսարանային դասերի վերաբերյալ ինքնուրույն աշխատանքներ – 2 միավոր) և ուսանողների մասնակցությունը դասերին ամբողջ կիսամյակի ընթացքում (2 միավոր):

Այսպիսով, ուսումնական դասընթացի արդյունքում ուսանողի ձեռք բերած գիտելիքը կարող է գնահատվել առավելագույնը 20 միավոր:

## Պարտադիր գրականության ցանկ

1. **Виппер Б.**, Введение в историческое изучение искусства, Изобразительное искусство, Москва, 1985 и др. издания.
2. **Волков Н.**, Цвет в живописи, Искусство, Москва, 1965.
3. **Вёлфлин Г.**, Основные понятия истории искусства, 3-е изд., Москва. 2002.
4. **Ильина Т.**, Введение в искусствознание, Аст-Астрель, Москва, 2003.
5. Популярная художественная энциклопедия, т. 1-2 т. Москва, разные издания.
6. **Williams R.**, Art Theory, An historical introduction, 2-nd edition, Chichester U.K., Malden MA: Wiley-Blackwell, 2009.

## Օժանդակ գրականություն

1. **Ազատյան Վ.**, Արվեստաբանություն և ազգայնականություն. Հայաստանի և Վրաստանի միջնադարյան արվեստները 19-20-րդ դդ. Գերմանիայում, Ակտուալ Արվեստ, Երևան, 2012:
2. **Արիստոտել**, Պոետիկա, թարգմանությամբ՝ Ա. Կարապետյանի և խմբագրությամբ՝ Վ. Ղազանյանի, Հայպետհրատ, Երևան, 1955:
3. **Բողեր Շ.**, Էսթետիկա, քննադատություն, Սարգիս Խաչենց-Փրինթինֆո, թարգմանությունը և առաջաբանը՝ Հենրիկ Բախչինյանի, Երևան, 1999:
4. **Դիդրո Դ.**, Սալոններ, կազմեց, ֆրանսերենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝ Հ. Բախչինյանի, Սարգիս Խաչենց, Երևան, 1994:
5. **Քոլլինզվուդ Ռ.**, Արվեստի հիմունքները, թարգմանությունը անգլերենից և առաջաբանը՝ Վ. Ղազարյանի, Սարգիս Խաչենց-Փրինթինֆո, Երևան, 2007:
6. **Алпатов М. В., Ростовцев Н. Н.**, Искусство: живопись, скульптура, архитектура, графика, М., 1987.
7. **Базен Ж.**, История истории искусства: От Вазари до наших дней, М., 1994.

8. **Вазари Дж.**, Жизнеописания наиболее знаменитых живописцев, ваятелей и зодчих, Полное издание в одном томе, М., 2008.
9. **Винкельман И.**, История искусства древности, издание подготовил Бабанов И., СПб. 2000.
10. **Вишпер Б.**, Статьи об искусстве, М., 1970.
11. Всеобщая история искусств, в 6 томах, М., 1956-66.
12. **Гомбрих Э.**, История искусства, АСТ, Москва, 1998.
13. **Дмитриева Н.**, Краткая история искусств, т. 1-3, Москва, 1988-90.
14. История эстетической мысли, в 6 томах, редакторы Бычков В., Любимова Т., М., 1987.
15. Мастера искусства об искусстве, в 7 томах, редакторы Губер А., Фёдоров-Давыдов А., Маца И., М., 1965.
16. **Маца И.**, История эстетических учений, Издательство Московского университета, Москва, 1962.
17. **Рескин Д.**, Лекции об искусстве, М., 2006
18. **Русаков Ю.**, Избранные искусствоведческие труды, СПб., Государственный Эрмитаж, 2000.
19. **Сидоров А.**, Рисунки старых мастеров: техника, теория, история, Москва-Ленинград, 1940.
20. **Турова В.**, Что такое гравюра, 2-е изд., Изобразительное искусство, Москва, 1977.
21. **Янсон Х., Янсон Э.**, Основы истории искусств, АОЗТ, «Икар», Санкт-Петербург, 1996.
22. Historical painting techniques, materials and studio practice, Symposium Articles, 26-29 June, University of Leiden, The Netherlands, editing and production coordination Corinne Lightweaver, printed in USA, 1995,
23. **Srnenska D.**, Francuzska rokokova grafika: zo zbierok Mirbachovho palaca, Tatran Bratislava, 1987.
24. The Grove Encyclopedia of Classical Art and Architecture, Oxford University Press, 2007.

25. The Oxford Dictionary of Art, 3-rd edition, Oxford University Press, 2004.

**Համացանցային գրականություն**

<http://www.artcyclopedia.com>

<http://www.jstore.org>

<http://www.academia.edu>